

Նորայր Եղիսկոպոս Պողարեանի հրատարակած *Ձեռագրաց Յուշակին* Թ. 59ա եւ 10 Օգոստոս 1680 թուակիր նամակը ակա-
նատեսի վկայութեամբ մեզի կը տեղեկացնէ
Յակոբ Զուղայեցի Կաթողիկոսին հիւանդու-
թեան ժամանակը եւ մահուան օրը: 1680ի
Աստուածայայտնութեան տօնէն ետք ան ե-
րեք ամիս խիթէ կը տառապի, կիսակատար
ապաքինում մը կ'ունենայ Ապրիլէն մինչեւ
Յուլիս, մերթ ընդ մերթ նոյն ցաւերը կրե-
լով: Յուլիս 27ին Սկիւտարի մէջ սաւտիկ
ջերմ կ'ունենայ: Կը նախատեսէ իր մօտա-
լուտ մահը, իր շուրջը խմբել կու տայ բազ-
մաթիւ երեւելի անձեր եւ անոնց ներկայու-
թեան կը կատարէ իր կտակը:

Շաբաթ օրը հիւանդաւուն Կ. Պօլիս կը
բերուի, կ'արձակէ բոլոր կապեալներն ու
բանադրեալները եւ կ'օրհնէ ժողովուրդը:
Մի քանի օր ետք, Օգոստոս 2ին, երկու-
շաբթի, ժամը 2ին (այսինքն եւրոպական
հաշուով՝ ժամը 8ին) հոգին կ'աւանդէ առ
Տէր:

«Յերկրորդում աւուր Օգոստոսի ամսոյ
յերկուշաբաթոյ յերկու ժամու աւանդեաց
գգաղցր հոգին առ Տէր, մինչ անկեալ կայր
ի վերայ բազկաց մերոց: Սուրբ Հայրապետն